

Կ-041¹-29.06.2017-ՊԻՄԻ-011/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 44¹-րդ հոդվածում՝

1) վերնագրի եւ տեքստի «հոգեմետ» բառից հետո լրացնել «(հոգեներգործուն)» բառը.

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ՝ նոր խմբագրությամբ.

«3. Սույն օրենսգրքում թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափեր են համարվում անսովոր գործածողի, այսինքն՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), ինչպես նաեւ խիստ ներգործող նյութեր չգործածող, 18 տարին լրացած եւ գործնականում առողջ անձի օրգանիզմի վրա հոգեներգործուն ազդեցություն թողնելու համար բավարար թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նվազագույն չափերից մինչեւ դրանց 5-ապատիկը ներառող չափերը:».

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասում ամրագրված չափորոշիչը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 44²-րդ հոդվածի վերնագրում եւ տեքստում, ինչպես նաեւ 126-րդ, 158-րդ եւ 182³-րդ հոդվածներում «հոգեմետ» բառից հետո լրացնել «(հոգեներգործուն)» բառը:

Հոդված 3. Օրենսգրքի 110¹-րդ հոդվածի վերնագրում եւ տեքստում «թմրանյութեր» բառը փոխարինել «թմրամիջոցներ» բառով:

Հողված 4. Օրենսգրքի 110² -րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետեյալ՝ նոր խմբագրությամբ.

«Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը».

2) 1-ին եւ 2-րդ մասերում «Սույն օրենսգրքի 2-րդ հավելվածով նախատեսված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն)» բառերը փոխարինել «Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր» բառերով.

3) 3-րդ մասը շարադրել հետեյալ՝ նոր խմբագրությամբ.

«3. Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր եւ զգալի չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հողված 5. Օրենսգրքի 1-ին եւ 2-րդ հավելվածները ճանաչել ուժը կորցրած:

Հողված 6. ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Հողված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 44¹ -րդ հոդվածում՝

1) վերնագրի եւ տեքստի «հոգեմետ» բառից հետո լրացնել «(հոգեներգործուն)» բառը.

2) 3-րդ մասը շարադրել հետեյալ՝ նոր խմբագրությամբ.

«3. Սույն օրենսգրքում թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափեր են համարվում անսովոր գործածողի, այսինքն՝ թմրամիջոցներ,

հոգեմետ (հոգեներգործուն), ինչպես նաև խիստ ներգործող նյութեր չգործածող, 18 տարին լրացած եւ գործնականում առողջ անձի օրգանիզմի վրա հոգեներգործուն ազդեցություն թողնելու համար բավարար թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նվազագույն չափերից մինչեւ դրանց 5-ապատիկը ներառող չափերը:».

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասում ամրագրված չափորոշիչը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 44²-րդ հոդվածի վերնագրում եւ տեքստում, ինչպես նաև 126-րդ, 158-րդ եւ 182³-րդ հոդվածներում «հոգեմետ» բառից հետո լրացնել «(հոգեներգործուն)» բառը:

Հոդված 3. Օրենսգրքի 110¹-րդ հոդվածի վերնագրում եւ տեքստում «թմրանյութեր» բառը փոխարինել «թմրամիջոցներ» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 110²-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետեւյալ՝ նոր խմբագրությամբ.

«Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը».

2) 1-ին եւ 2-րդ մասերում «Սույն օրենսգրքի 2-րդ հավելվածով նախատեսված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն)» բառերը փոխարինել «Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր» բառերով.

3) 3-րդ մասը շարադրել հետեւյալ՝ նոր խմբագրությամբ.

«3. Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր եւ զգալի չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 5. Օրենսգրքի 1-ին եւ 2-րդ հավելվածները ճանաչել ուժը կորցրած:

Հողված 6. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից ~~երեք~~ վեց ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԻՆԱԳԾԻ (Կ-041¹-29.06.2017-ՊԻՄԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 6.	Առաջարկվում է «երեք» բառը փոխարինել «վեց» բառով, քանի որ նախատեսված եռամսյա ժամկետը հնարավոր է բավարար չլինի ոլորտի մասնագետների կողմից կառավարության որոշմամբ թմրամիջոցների և այլ նյութերի չափերը պատշաճ սահմանելու համար:	Ընդունվել է:	Ընդունվել է: